

Ո՞եռեալ է արդ համայն ի տանս ամայի .
Ըրտասուակաթ զցգ մ'աշաց լոկ անդ հայի .
Ապասեմ յանգետս՝ առ ինչ , երթամ եւ կամ ուր .
Դիրկս առ ոչինչ բանամ , փակեմ եւ ի զուր .
Տիւք եւ զիշելք ինձ համակեալք միագոյն ,
Ծցօթք եւ յոյս՝ յանձն իմ մեռեալք զուգագոյն :
Այլ ձեռք Տեառն հար ըզքեզ , իմ սիրտ , կաց անդոյր ,
Ու ի ցաւս քո նմա տուր համբոյր :

ԼԱՄԱՐԴԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լուղովիկոս ԺԶին վարքն ու մահը :
(Տես երես 295)

Արդէն ես Դիւրժիին հետ խօսելու
յարմար առիթ մը դտեր էի , և իր ձեռ
քովը թագաւորին վրայօք Աղիսաբեթ
խաթունին լուրեր կը խրկէի : Արկրորդ
օրը Դիւրժի ըսաւ ինձի թէ “ Աղիսա
բեթ խաթունը վարպետութեամբ մը
աս նամակը տուաւ ինձի որ քեզի բե-
րեմ . . . և հանեց թղթի կտոր մը
տուաւ . ասիկայ ասեղի ծայրովը գը-
րուած էր , որուն մէջ կը խնդրէր թէ
թագաւորին աղաչեմոր իր ձեռքովը քա-
նի մը տող բան գրէ ու խաւրէ : Այն իրի-
կունը աս բանս թագաւորին իմացուցի .
ան ատեն ինքը քովի ունեցած թանա-
քովը , որ իրեն տուեր էին դատաստանը
սկսած օրէն , քանի մը տող գրեց իր
քրոջը , և առանց կնքելու ինձի տուաւ
ըսելով թէ “ Ինանկ անվնաս բաներ
գրեր եմ , որ ինչ մարդու ձեռք ալ իյ-
նայ նէ՝ չեմ վախնար . . . և հրաման
տուաւ որ կարդամ , բայց ես չկարդացի :

Արկրորդ օրը այդ նամակը Դիւր-
ժիին տուի . և ինքը ասոր պատասխանը
բերաւ ինձի առջինին ո՛չովը գրուած ,
որն որ կծիկ մը ձեւացուցած էին .
Դիւրժի իմ դրանս քովէն անցնելու
ատեն անկողինիս տակը ձգեց : Ձագա-
ւորը շատ ուրախացաւ տեսնելով որ իր
ընտանեաց վրայ լուր առնելու այս կեր-
պը լսւ կը յաջողէր . իր գրած տոմսակ-

ները ինձի կու տար , և ես դերձաններ
վրան պլլելով՝ կծիկ մը կը ձեւացընէի .
իսկ Դիւրժի գրուածքները այն դարա-
նին մէջէն կ'առնէր կը տանէր , ուր որ
կերակրոյ պնակները կը դրուէին , ու
այլ և այլ կերպեր կը բանեցընէր որ
եկած պատասխանները անվնաս ձեռքս
հասցընէ . իսկ երբոր ես զանոնք թա-
գաւորին կու տայի , միշտ կը զգուշացը-
նէր ինքը որ զիս շատ վտանգի մէջ
չձգեմ :

Պահապաններուն ինձի տուած մոմ
պատը միշտ թղթի մէջ պլլած ու չուա-
նով մը կապած կ'ըլլար . երբոր աս չուա-
նի կտորները քովս շատցան , թագաւո-
րին միտքը ձգեցի որ կրնար ատոնցմով
Աղիսաբեթ խաթունին հետ դիւրաւ
թղթակցութիւն մը հաստատել . վասն
զի անոր խուցին պատուհանը ձիշդ իմ
խուցիս քովի եղած պղտի սրահին պա-
տուհանին վրան ըլլալով , կրնար Աղի-
սաբեթ խաթունը գիշերները չուանով
նամակ կամուրիշ բան ձեռքս հասցը-
նել պատուհանէն վար իջեցընելով . և
ամենեին վախ մը չկար որ թղթերը
պատահմամբ պարտէզը իյնան , որովհե-
տեւ ամէն պատուհանի դիմաց դուրս
երկնցած դարանի պէս տեղեր կային :
Իս ճամբով կրնային վերիններն ալ ի-
րենց գրածին պատասխանն ընդունիլ ,
ինչպէս նաև կրնայինք տալ իրենց քիչ
մը թուղթ ու թանաք , որոնցմէ բոլո-
րովին զրկուած էին : “ Իհա մէկ նոր
հնարք մը , ըսաւ թագաւորը , զորն որ
կրնանք գործադրել՝ երբոր մեր հիմա-
կուան ճամբան խափանուի . . . Եւ ի-

բաւցընէ անկէ վերջը սկսաւ թագաւորը աս հնարքս 'ի գործ դնել . ամէն օր իրիկուան 8^{ին} կը սպասէր որ թուղթ առնէ ու տայ . և ես նոյն միջոցին իմ խուցիս ու ան ըսած սրահակին դռները կը գոցէի , և միանգամայն պահապանները խօսքի կը բռնէի ու խաղի կը զբաղեցընէի՝ որ եղած թղթակցութեան կասկածի չերթան :

' Այն օրերը Արշան անունով աշխատաւորի մը , որ ընտանեաց տէր մարդ էր , իր երկու ամսուան ծառայութեան վարձքը գողցուեցաւ Տաճարին մէջ , որ 200 ֆրանգի չափ բան մըն էր . աս կորուստս իրեն համար մեծ բան մը կը սեպուէր : Ծագաւորը տեսնելով աս մարդուս մաղձոտութիւնը , որուն պատճառը արդէն գիտէր , հրամայեց ինձի որ Արշանին 200 ֆրանգ տամ , և թէ պատուիրեմալ իրեն որ բնաւ մէկու մը չըսէ , և ոչ ալ չնորհակալ ըլլայ , վասն զի կրնար փորձանք մը գլուխը գալ . Արշան երբոր աս բերերարութիւնս տեսաւ , շատ աւելի երախտապարտ կերպով սկսաւ ծառայել :

Ծագաւորը իր ընտանիքէն բաժնուելէն ետքը , չուզեց ալ պարտէզը քալելու իջնալ . երբոր իրեն աս բանս կ'առաջարկէին , կ'ըսէր թէ " Ահնակ քալելու ախորժ մը չեմզգար . իմ զուարձութիւնս իրենց հետ քալելուն վրան էր . . . Իսայց որ զարմանալին է՝ իր սիրելիներէն բաժնուած և թէալէտ զրեթէ ձեռքով զրածի պէս գիտէր իր գլխէն անցնելիքներն ալ , բնաւ գանգատ մը չէր ըներ . վասն զի արդէն զինքը հալածողներուն բոլոր թողութիւն տուած էր , և իր ամէն օրուան հոգեոր ընթերցմունքներէն նոր զօրութիւն մը կ'առնէր զինքը ամուր բռնելու համար : Ծակ որ օրուան մէջ երբեմն խուցէն գուրս ելլար նէ , միայն առողջութեան և ուժ առնելու համար կ'ելլար : Ինձի հետ անանկ կը վարուէր՝ իրեւ թէ մեծ աստիճանի մարդ մը ըլլայի և ոչ թէ ծառայ . նոյնպէս նաև իրեն պահապանութիւնող մարդկանց հետ ալ անանկ կերպով մը կը վարուէր , իրըն թէ ամենե-

ւին գանգատելու ու տժգոհութեան առիթ մը ունեցած ըլլար , ինչպէս որ կը վարուէր ատենօք իր հպատակներուն հետ : Կր խօսակցութիւնը շատ անգամանոնց կացութեանը , ընտանեացն ու որդւոցը վիճակին վրայ կ'ըլլար . երբեմն ալ իրենց արուեստին և պարտքերուն վրայ . բայց անանկ խելքով կը խօսէր , որ լսողները կը զարմանային իր իմաստութեան ու անշափ գիտութեանը վրայ , և կը հիանային ալ թէ ինչ վայելու կերպով իր հանձարը կը գործածէր : Այսանկ խօսքեր իր սրտին ազնուութենէն միայն կը բխէին , և ոչ թէ իր վիշտերը փարատելու համար կը զուրցէր . վասն զի իր ունեցած հաստատուն համակամութեամբը ամէն բանի կը յաղթէր :

" Դեկտեմբերի 19^{ին} չորեքշաբթի օրը թագաւորին ամէն օրուան սովորական եղած նախաճաշիկը տարի , առանց կաղանակաց պաք ըլլալը մտածելու : " Այսօր պաք է . . . , ըստ թագաւորը . և հարկ եղաւ որ բերածս նորէն ետ դարձընեմ : " Վու տիրոջդ պէս անշուշտ դուն ալ ծոմ պիտի պահես . . . ըստ ինձի ծաղրելով մը պահապաններէն մէկը , որուն անունն էր Տորա տը Վախապիէր : " Չէ , պարոն , պատասխանեցի ես իրեն , այսօր կարօտութիւն ունիմ նախաճաշիկ ընելու . . . Այս դէպքէս քանի մը օր վերջը թագաւորը ինձի օրագիր մը տուաւ , զորն որ Պ . Ալէրպը բերած էր իրեն , և որուն մէջ աս դիպուածը պատմուած էր ըոլորովին փոխած . " Լարդա , ըստ , և կը տեսնաս որ ինչպէս զքեզ անզգամի տեղ զրեր են . անշուշտ աւելի կ'ախորժէին՝ թէ որ կարենային կեղծաւորի տեղ գնելնէ . . . "

" Այն օրը դարձեալ թագաւորը սեղանի նստած ատեն իրեք կամ չորս պահապաններու գիմաց ըստ ինձի . " Չորեքաւասաներորդ տարին լմնցաւ այսօր . առաւօտուլնէ աւելի զքեզ փութոտ կը տեսնամ հիմա . . . մէկէն իմացայ թէ ինչ կ'ուզէ ըսել : Ա երջը վրայ բերաւ . " Այսօր իմ աղջկանս ծննդեան օրն

է . . . ոհ , այսօր իր ծննդեան օրն ըլլայ , սիրտը ելած կերպով մը կրկնեց , և չկարենամ տեսնալ զինքը . . . : Ազքերը արցունքով լեցուեցան , և խոր լուռթի մը պատեց խել մը ատեն :

Եղիսաբեթ խաթունը կը փափաքէր արքունեաց մէջ գործածած օրացոյցին նման օրացոյց մը ունենալ . թագաւորը հրամայեց որ մէկ հատ մը գնեմ , և իրեն համար ալ հասարակապետութեան օրագրութենէն գնեմ , որ թագաւորականին տեղ կը տպէին : Շատ անգամ կը խառնէր զանիկայ , և լուսանցքը մատիտով անուններ կը նշանէր :

Խել մը ատենէ , 'ի վեր էր որ թագաւորին քովէն ածելիները առեր էին . ինքը աս բանիս համար շատ նեղութի կը քաշէր , և հարկ կ'ըլլար որ օրուան մէջ երեսը ստէպ պաղ ջրով լուայ : 'Իոյն օրերը որովհետև երկրորդ անգամ՝ Դաշնակցաց ատենին պիտի ներկայանար , ըսաւ ինձի որ մկրատ կամ ածելի մը գտնամ . բայց ինքը աս բանիս վրայօք չէր ուզեր պահապաններուն հետ խօսիլ : Ես համարձակեցայ ըսելու իրեն՝ թէ աս կերպով ժողովքին երենալը աղէկ կ'ըլլար , որովհետև ժողովուրդը կրնար ըմբռնել թէ ինչ անգութ կերպով կը նայէին զինքը իր արգելանաց մէջ : Այսկայն պատասխանեց մէկէն թագաւորը՝ թէ «Պիտք չէ որ ես ուրիշներուն սիրտը շարժելու աշխատիմ . . . : Այսով հարկ եղաւ որ աս բանիս վրայօք խօսիմ պահապանաց հետ . և հասարակութիւն մէկէն հրաման տուաւ առանձին հրամանագրով մը՝ որ ածելիները թագաւորին տրուին , բայց պայմանաւ որ առանց ներկայութեան երկու պահապանի չկարենայ գործածել :

Ծննդեան նախընթաց իրեք օրերը թագաւորը սովորականէն աւելի գրելով անցուց : 'Իոյն պտենները կը մտածէին զինքը ուրիշ տեղ փոխադրել և դատաստանական քննութիւնը շուտով լմնցընել : Ինձի ալ հրամայեցին որ պատրաստուիմու հարկաւոր եղած բաները կարգի գնեմ . բայց մտածութիւննին 'ի գործ չղրուեցաւ :

«Քրիստոսի Ծննդեան օրը թագաւորն իր կտակը գրեց . ես կարգացի զանիկայ և օրինակեցի ան օրն որ Տաճարի խորհրդարանին յանձնուեցաւ . ամբողջ իր ձեռքովը գրած էր , ու միայն մէկ քանի տեղ աւրած բաներ կային : Հարկաւոր կը սեպէմ հոս առաջ բերել աս կտակս , որ իր անմեղութեանն ու բարեպաշտութեանը յիշատակարան մըն է :

“ Եանուն ամենասուրբ Երրորդութեան , Նօր և Արդւոյ և Հոգւոյն սըրբոյ : Այսօր գեկտեմբերի 25^{ին} 1792 տարւոյն՝ ես Լուգովիկոս Ժամագաւոր Գաղղիոյ անուանեալս , որ չորս ամսէ՝ 'ի վեր իմ ընտանեացս հետ Դարի զու Տաճարի ըսուած աշտարակին մէջ փակուած ըլլալով անոնց ձեռքովն որ ատեն մը իմ հպատակներս էին , ու մէկու մը հետ խօսելու հրաման չունենալով , և ամսուս 11^{ին} սկսեալ և ոչ իսկ իմ ընտանեացս հետ . և դարձեալ դատաստանական քննութիւն մը ինձի դէմ բացուելով՝ որուն վերջը չեմ կը նար գուշակել՝ մարդկային կրից պատճառաւ , և միւս կողմանէ գիտեմ ապահովութիւն որ օրինաց զօրութեամբը չեն կը նար ուզածնին գլուխ տանիլ , Աստուծոյ առջեւ՝ որ իմ մտացս մի միայն վըկան է և զիս կը տեսնայ , կը յայտնեմ իմ վերջին կամքս հետեւեալ կերպովս :

„ Հոգիս իմ արարչիս Աստուծոյ ձեռքը կը յանձնեմ , և կ'աղաչեմ իրեն որ գլութեամբ ընդունի զայն , ոչ ըստ արդեանց իմոց՝ այլ վասն արդեանց Հիսուսի Քրիստոսի , որն որ Նօր Աստուծոյ պատարագ ընծայեցաւ՝ զմեզ ազատելու համար , թէպէտ և անսարժան էինք , որոնց գլուխը ես եմ :

„ Կը մեռնիմ 'ի ծոց մեր կաթողիկէ , առաքելական և հռովմէական մայլ եկեղեցւոյն , որուն իշխանութիւնը յաջորդաբար Ա . Պետրոսէ կ'իջնայ , որ 'ի Հիսուսի Քրիստոսէ ընդունեցաւ :

„ Կը հաւատամ և կը խոստովանիմ հաստատութեամբ ան ամէն բան որ հանգանակին մէջ գրուած է : Աստու

ծոյ և եկեղեցւոյ պատուիրանները, սրբազան և եկեղեցւոյ խորհուրդները, ինչպէս որ կաթողիկէ եկեղեցին կը սորվեցընէ՝ կ'ընդունիմ։ Եշկեղեցական խնդրոց վէճերու մէջ, որոնք ՚Քրիստոսի եկեղեցին կը խռովեն, չեմ ուզած բնաւ դատաւոր ըլլալ, այլ միշտ հպատակէր եմ, ու թէ որ ՚Կատուած ինձի կեանք տայ՝ պիտի հպատակիմ եկեղեցւոյ առաջնորդաց որոշմանքներուն, որոնք կաթողիկէ սուրբ եկեղեցւոյն սովորութեանցը համեմատ կը գործեն ըստ աւանդելոցն ՚ի ՚Քրիստոսէ։

„ Կը ցաւիմ այն ամենայն քրիստոնեայ եղբարցս վրայ, որոնք կրնան մոլորիլ. բայց չեմ դատեր զանոնք, ու կը սիրեմ միշտ ՚ի ՚Քրիստոս ՚Խիսուս՝ ինչպէս որ մեզմէ քրիստոնէական եղբայրութիւնը կը պահանջէ։ Կ'աղացեմ ՚Կատուածոյ որ իմ մեղքերուս թողութիւնու մաննալու ու ՚Կատուածոյ դիմացը խօնարհելու համար։ Ոկրնալով ուղղափառ քահանայի մը խստովանիլ, կը խնդրեմ ՚Կատուածմէ որ ընդունի իմ մետաւոր խստովանութիւնս որ ըրի իր մեծվայելցութեանը առջեւ, և մասնաւրապէս ընդունի իմ անկեղծ ցաւս որ կը զգամ այնպիսի հրովարտակներու ստորագրելուս վրայ, որոնք կերպով մը եկեղեցական օրինադրութեանց և իրեն վարդապէտութեանը հակառակ կրնան ելլալ, թէպէտ և կամացս ու յօժարութեանցս դէմ ըրած ըլլամ։ Կը յուսամ ՚Կատուած որ իմին հաստատուն բաղձանքս կատարէ՝ ընորհելով կեանք և ուղղափառ քահանայ մը որով կարենամ իմ մեղքերուս խոստովանութիւնը կատարել և ընդունիլ իրմէ ապաշխարութեան խորհուրդը։

„ Կ'աղացեմ այն ամէն անձանց, զորոնք անմտագրութեամբ մը վշտացուցած կրնամ ըլլալ (որովհետեւ չեմ յիշեր որ կամովին ասանկ բան ըրած ըլլամ) որ ներեն ինձի. ինչպէս նաև այն ամենուն, որոնք թեթևս դայթակղութիւն և չար օրինակ առեր են ինձմէ, որով իրենց վնասու մը պատճառ եղեր

եմ։ Կը խնդրեմ ամէն բարեպաշտ անձինքներէ, որ իրենց աղօթքին մէջ զիս ալ յիշեն, որպէս զի ՚Կատուածմէ իմ մեղացս թողութիւն ընդունիմ։

„ Կը ներեմ բոլորով սրտիւ ան ամենուն, որ ինձի հետ թշնամացան առանց իմ կողմանէս պատճառ մը տալու . և կ'աղացեմ ՚Կատուածոյ որ թողութիւն տայ անոնց, ինչպէս նաև այն ամենուն՝ որ թիւր նախանձայուզութիւնը մը ինձի չարիք հասուցին։

„ Իմ կինս, որդիքներս, քոյրս, իմ մօրաքուրերս, իմ եղբայրներս և բոլոր աղգականներս, կամ որոնք որ ինձի հետ վերաբերութիւն մը ունեցեր են՝ ՚Կատուածոյ կը յանձնեմ։ մասնաւրապէս կ'աղացեմ ՚Կատուածոյ որ գթութեամբ նայի իմ կնոջս, որդւոցս ու քրօջս վըրայ, որոնք շատ ատենէ ՚ի վեր հաղորդեն իմ վիշտերուս, և թէ որ յանկարծես մեռնիմ՝ իր ընորհացը մէջ պահէ զանոնք, քանի որ այս վաղանցուկ աշխարհքիս մէջն են։

„ Որդիքներս իմ կնոջս կը յանձնեմ, թէպէտ ամենեին մէկ կերպով մըն ալ տարակոյս չեմ ունեցած իր մայրական գթութեանը վրայ . մասնաւր կերպով կը յանձնեմ որ ամէն բանէ առաջ զանոնք բարի քրիստոնեայ և բարի մարդիկ ընէ . սորվեցընէ իրենց թէ աշխարհքիս մեծութիւնները պակասաւոր ու վտանգաւոր բաներ են, եթէ դժբաղդաբար իրենց ալ վիճակելու ըլլայ այդ դառն ճակատագիրը . և ընդհակառակն մտքերնին լաւ տպաւորէ յաւիտենական հաստատուն և անանցանելի փառաց սէրը։ Կ'աղացեմ իմ քրօջս ալ՝ որ շարունակէ որդւոցս վրայ ցուցուցած իր գորովալից խնամքը, եթէ թըշուառաբար մայրերնին կորսնցընեն խեղձերը։

„ Կ'աղացեմ կնոջս որ իմ պատճառաւս քաշած նեղութիւններուն ու վիշտերուն ներէ, ինչպէս նաև միացեալ եղած ատեննիս տուած ձանձրութիւններուս . նոյնպէս նաև ապահով կը նայ ըլլալ ինքը, որ իրեն դէմ գանգատելու բան մը չունիմ ամենեին։

„Ալ յանձնեմ ամենայն փութով իմ զաւկըներուս՝ որ լուսուծոյ երկիւղը միշտ սրտերնուն մէջը ունենան, զոր ամէն բանէ վեր պէտք է սեպել. և դարձեալ՝ թէ մէջերնին միաբան ըլլան, իրենց մօրը հնազանդ գտնուին, և լաւ ձանձնան այն հոգերն ու վիշտերը՝ որ իրենց համար քաշած է, միշտ յիշելով զիս. կ'աղաչեմ դարձեալ՝ որ իմ քոյլս իբրև երկրորդ մայր մը սեպեն իրենց :

„Ալ յանձնեմ իմ որդւոյս, որ եթէ դժբաղդաբար թագաւորելու ըլլայ, միշտ իր քաղաքացեաց բարին աշքին առջեն ունենայ. բոլորովին մոռնայ ինչ և իցէ կերպով եղած ատելութեան և թշնամութեան գործքերը, մանաւանդ այն խեղձութիւններն ու վիշտերը որ կը քաշեմ. գիտնայ որ չկրնար ժողովուրդը երջանիկ ընել, բայց եթէ ըստ օրինաց կառավարելով. միայն՝ օրէնքը պահել տալու, և աղէկութիւն ընելու համար, պէտք է որ ինքն ալ հարկաւոր եղած իշխանութիւնն ունենայ. և թէ որ ազատ ըլլայ իր գործոցը մէջ և ոչ ալ մեծաբոյ, տարակոյս չկայ որ աւելի վնասակար կ'ըլլայ քան թէ օգտակար ան տեսակ իշխանութիւնը :

„Ալ յանձնեմ դարձեալ իմ որդւոյս այն ամէն անձինքը, որ ինձի հաւատարիմ մնացին որչափ որ պարագաները թոյլ կու տան. և միանգամայն չմոռնայ՝ որ սրբազան պարտք մը ունիմ նըկատմամբ այն անձանց որդւոցը և ազգականաց հետ, որոնք որ իմ պատճառաւս մեռան և կամ թշուառութեան մէջ ինկան :

„Դիմում որ ինձի ծառայողներէն շատը՝ իրենց պարտքը ինչպէս որ պէտք էր նէ չկատարեցին, մանաւանդ թէ փոխարէն ապերախտութիւն ըրին. բայց ես կը ներեմ անոնց, (վասն զի գիտեմ որ մարդ խռովութեան ու շփոթութեանց միջոց տէր չէ իր անձին), և կ'աղաչեմ իմ որդւոյս ալ՝ որ ըստ պարագային թողութիւն չնորհէ անոնց :

„Առաջէի մէկ ցոյց մը տալ հոս իմ երախտագիտութեանս անոնց, որ վրաս

անկեղծ և անշահասէր գութ մը ցուցուցին : Այւ յիրաւի որչափ որ վշտացեր եմ քանի մը անձանց ապերախտութեն ու նենգութեանը համար, որոնց որ ընդ հակառակն ամէն տեսակ բարիք ըրեր էի, թէ իրենց ըլլայ՝ թէ ազգականներնուն և թէ բարեկամներնուն, այնչափ աւելի ալ միսիթարուեցայ մէկալնոնց ինձի ցուցուցած սիրոյն ու երախտագիտութեանը համար, և կ'աղաչեմ իրենց որ ընդունին իմ 'ի բոլոր սրտէ ըրած չնորհակալութիւններս : Այրկայ վիշակիս հանգամանացը նայելով, խոհեմութիւն սեպեցի անուննին չտալ՝ զիրենք վտանգի մէջ չձգելու համար. բայց առանձին կը յանձնեմ որդւոյս՝ որ անոնց երախտապարտ ըլլայ :

„Արծեմ յայտնի նախատինք մը ըրած կ'ըլլայի ազգային զգացման, թէ որ յայտնապէս չյանձնէի իմ որդւոյս Շամիլեի և Հիւպարոնները, որոնք իմ վրաս ցուցուցած անկեղծ սիրոյն համար ինձի հետ աս տխուր բնակարանիս մէջը փակուած են, իրենց կեանքը վտանգի մէջ դնելով : Այն բանը կ'ըսեմ Դալէրիին համար ալ, որուն բռնած կերպը ամենայն իրօք գովելի է՝ որչափ ատեն որ հետս մէկտեղ է. և որովհետեւ ինքը ինչուան վերջը ինձի հետ մէկտեղ մնաց, անոր համար կ'աղաչեմ հասարակութեան գլխաւորներուն՝ որ իմ զգեստներս, գրքերս, ժամացոյցս, քըսակս, և ուրիշ պղտի բաներս իրեն տան, որոնք որ Հասարակաց խորհրդարանին մէջ պահեստի դրուած են :

„Ալ ներեմ բոլորով սրտիւ պահապաններուս ինձի հետ ըրած գէշ վարմունքին, և իրենց բանեցուցած խիստ կերպին . իրաւ է որ հանդիպեցայ ալ կարեկցութիւն ունեցող ու գթած անձանց ալ, և ահա կը մաղթեմ որ վայելեն անոնք այն լիուլի քաղցրութիւնն ու հանդարտութիւնը, որ այսպիսի առաքինութեանց անմեկին ընկերն են :

„Աղաչեմ Ուալէրակ, Դարոնշէ ու Տըսէզ պարոններուն ալ՝ որ իմ սրտանց չնորհակալութիւններս ընդունին իրենց ինձի ցուցուցած խնամքներնուն և իմ

պատճառաւուս քաշած վիշտերնուն համար :

„ Ահաւասիկ վերջ կու տամ գըրուածքիս , ծանուցանելով Աստուծոյ առջին , որուն ատենին դիմացը պիտի ներկայանամքիչ ատենէն , թէ խիղճամենսեին զիս չստգտաներ ան ամէն յանցանաց համար , որոնց պարտաւոր ամբաստանուած եմ :

Գրեալ յաշտարակի Տաճարին . 25 Դեկտ . 1792.

ԼՈՒԴՈՎՐԿՈՍ

Դեկտեմբերի 26^{ին} Երկրորդ անգամ թագաւորը ներկայացաւ Ազգային ժողովոյն փաստաբանից ատենին . ես ժամանակին թագուհւոյն իմացուցի ասքանս , որպէս զի թմբուկներուն ձայնն ու զինուորաց շարժումը զինքը չվախցընէ : Յօագաւորը առտուն 10^{ին} գնաց հոն ու իրիկուան Յնն դարձաւ , ընդ հսկողութեամբ Շամպօնի և Անդէռի : Այս իրիկունը եկան Ալեքրպ , Դրոնչէ ու Տըսէզ պարոնները՝ թագաւորին սեղանէն ելած ատենը . հոն թագաւորը իրենց զովացուցիչ ըմպելիք մը հրամցուց , զոր միայն Պ . Տըսէզ առաւ . թագաւորը շնորհակալ եղաւ անոր՝ որ նեղութիւն յանձն առնլով կարդացեր էր բոլոր իրեն ջատագովական գրուածքը , և անկէ նեղքին սենեակը գացին :

Երկրորդ օրը թագաւորը ինձի ալ տուաւ իր վրայ տպուած ջատագովութիւնը , բայց պահապաններուն հրամանաւը : Պահապաններուն մէջէն Ա էնսան անունով մէկը , որն որ ամէն տեսակ ծառայութիւն կ'ընէր թագաւորական ընտանեաց համար , յանձն առաւ որ օրինակ մը այն գրուածքէն թագուհւոյն տանի . Ա էնսան աս բանս յարմար առիթ սեպելով , Երբոր թագաւորը շնորհակալ կ'ըլլար աս իրեն ըրած ծառայութեանը համար՝ իրմէ յիշատակ մը խնդրեց . ան ատեն թագաւորը հանեց վզնոցն ու անոր տուաւ : Աւրիշ անգամ մըն ալ պահապանի մը ,

որ նոյնպիսի առթով մը յիշատակ մը կ'ուզէր , առաւ ձեռնոցները տուաւ . այնչափ եղած էր , որ իր պահապաններն ալ իբրև մասունքի տեղ կը դնէին իրեն զգեստեղէնները :

Կարգէ դուրս նաւարկուրին մը աստնամանեաց վրայ :

Երբոր Ազախու ծովը կը սառի , ձկնորսք՝ ասոր արևմտեան ափանց շատ կողմերը սառոյցներուն վրայ տնակներ կը շինեն ու կը բնակին մէջը : Ի՞այց երբեմն կը հանդիպի որ սառնամանիքը յանկարծ հալելով , արևելեան ուժգին հովը սառոյցի բեկորներ իրենց վրայ բը նակող անձինքներովն ու տնով տեղով կը քաշէ ափունքներէն ու ծովուն խորունկ տեղուանքը կը նետէ . ասոնցմէ ոմանք դիմացի ափունքը կ'իյնան , բայց մեծ մասը ջրոյն զոհ կ'ըլլայ : 1835 տարւոյն ձմեռը՝ խեղճ ձկնորս մը դիւրաբեկ սառոյցի կտորի մը վրայ մնացած՝ Վէշի նեղուցէն Աւ ծովը բերուեր էր քամիներու սաստկութենէն : Հյովեղերքէն տեսան մարդիկ ասոր յուսահատութիւր . բայց ամենսեին ձար չկար ազատելու զանիկայ : Աւրիշ ասոր նման դիպուած մըն ալ հանդիպեր է նոյն տարուան դեկտեմբեր ամսուն Ազախու ծովուն մէջ , որն որ հետեւեալ պատմութիւնն է :

Աւ ծովուն Արիվլէննէ գեղը բնակող խազախ մը , որ Այսէաննէս Ինոդաբէնքոյ կը կոչուէր . Ազոնիկվի մօտ ձկնաբանի մը մէջ կը գտնուէր : Դեկտեմբերի 25^{ին} սառնամանիքը խիստ ամուր երևնալով , ասիկայ մզոն մը ծովեղերքէն հեռու առաջ գնաց՝ զննելու համար իր ցանցերը , զորոնք ձգեր էր սառոյցներուն վրայ բացուած ծակերուն մէջ : Ազախու ծառայութեանս զբաղած ատենը՝ մէյմ'ալ կը նայի որ ան սառոյցին բեկորը , որուն վրայ ինքը կեցած էր , փրթեր զատուեր է , և ծովուն երեսին վրայ արագութեամբ առաջ կը քալէ : Այեղճ մարդը տեսնելով որ դարման չկայ ազա-